

**Գլոբալիզացիայի եւ տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի
(ԳՏՀՎԿ) կողմից 2018 թ. անցկացված սոցիոլոգիկական հարցման արդյունքները եւ
վերլուծությունը՝ միջազգային կազմակերպությունների՝ ԵՄ, ԵԱՏՄ, ՀԱՊԿ եւ ՆԱՏՕ
նկատմամբ Հայաստանի հասարակության տրամադրվածության շուրջ**

Գլոբալիզացիայի եւ տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնը (ԳՏՀՎԿ) 2017 թվականի հունիս-սեպտեմբեր ամիսների ժամանակահատվածում անցկացրել էր հարցում՝ նպատակ ունենալով պարզել Հայաստանում ներքին եւ արտաքին քաղաքականության՝ մասնավորապես միջազգային կազմակերպությունների՝ ԵՄ, ԵԱՏՄ(Եվրասիական Տնտեսական Միություն), ՀԱՊԿ(Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն), ՆԱՏՕ վերաբերյալ հասարակական կարծիքը Հայաստանում, ինչպես նաեւ ԳՏՀՎԿ-ն ուսումնասիրել էր քաղաքական կուսակցությունների մոտեցումները նույն հարցերի շուրջ: Հարցումը իրականացվել էր ԳՏՀՎԿ-ի կողմից՝ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի (NED) աջակցությամբ:

Նախագծի առաջին փուլում, որը իրականացվել էր 2017 թվականի հունիսի 1-ից մինչեւ օգոստոսի 1-ը՝ Նախագծի եւ ԳՏՀՎԿ-ի փորձագետների կողմից կազմված հարցաթերթիկի միջոցով, անանուն հարցումներ էին իրականացվել Երեւան, Գյումրի, Վանաձոր, Վայք, Եղեգնաձոր եւ Մարտունի քաղաքներում: Հարցումը կատարվել էր ընդհանուր թվով 900 քաղաքացիների շրջանում: Հարցվածներից 497-ը (55.2%) եղել են կանայք, իսկ 403 (44.8%)՝ տղամարդ (մանրամասն, տես “Analysis of Policies of Political Parties and Public Sector in Armenia Regarding the EU, NATO, CSTO as well as EEU and Results of the Public Opinion Poll”, Yerevan 2018):

Պետք է ընդգծել, որ հարցումների արդյունքները մեծ արձագանք ստացան ինչպես Հայաստանում, այնպես էլ Հայաստանից դուրս: Այսպիսով, հարցին, թե արդյո՞ք Ռուսաստանին համարում եք Հայաստանի դաշնակից, հարցվածների միայն 34.33% էր դրական պատասխան տվել: Հարցվածների 35.11% կարծիք էր հայտնել, որ Ռուսաստանը մասամբ է Հայաստանի դաշնակիցը: Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման վերաբերյալ հարցին ի պատասխան հարցվածների 56.33% նշել էր, որ Ռուսաստանը բացասական ազդեցություն է գործում կարգավորման

գործընթացի վրա, իսկ 40.11% Ռուսաստանի ազդեցությունը դրական էր գնահատում: ՀԱՊԿ-ը, որտեղ գերակշիռ դեր ունի Ռուսաստանը, ապահովո՞ւմ է Հայաստանի անվտանգությունը հարցին միայն 15.78% էր դրական պատասխան տվել, իսկ 41.33% գտել էր, որ ՀԱՊԿ-ը չի ապահովում Հայաստանի անվտանգությունը: Հարցին, թե ՀԱՊԿ-ը կաջակցի՞ Հայաստանին, եթե Ադրբեյջանի հետ պատերազմ սկսվի, հարցվածների 31.22% նշել էր, որ ՀԱՊԿ-ը կաջակցի, իսկ 63.44% տվել էր բացասական պատասխան:

Իհարկե, Հայաստանի քաղաքացիների այս պատասխանները կոտրում են միջազգային հանրության շրջանում տեղ գտած կարծրատիպերը, որ իբր Հայաստանում գերակշռում է դրական տրամադրվածությունը Ռուսաստանի եւ տարածաշրջանում նրա վարած քաղաքականության հանդեպ: Ակնհայտ է նաեւ Ռուսաստանի կողմից նախաձեռնած ինտեգրացիոն կազմակերպությունների (օրինակ, ինչպիսին ՀԱՊԿ-ն է) նկատմամբ հարցվածների անվստահությունը: 2017 թվականին ԳՏՀՎԿ-ի կողմից անցկացված հարցման արդյունքների շուրջ ծավալվեցին լուրջ քննարկումներ ինչպես Հայաստանում, այնպես էլ երկրից դուրս (կային մեծ թվով հղումներ ստացված տվյալներին), առավել եւս, որ հարցումները ցույց տվեցին քննադատողական տրամադրվածություն Ռուսաստանի կողմից վարվող քաղաքականության հանդեպ:

Հայաստանի՝ 2013 թվականին ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագրի ստորագրումից հրաժարվելը հարցված քաղաքացիների 78.67% բացասական էր գնահատում, իսկ 20.56%՝ դրական: Հայաստան-ԵՄ հարաբերությունների ակտիվացումը հարցված քաղաքացիների 88.67% դրական էր գնահատում, իսկ 10.67%՝ բացասական: Հարցին էլ, թե կապո՞ւմ էք Հայաստանի ապագան ԵՄ անդամակցության հետ, քաղաքացիների 58.89% դրական էր պատասխանել, իսկ 38.22%՝ բացասական: Այս հարցերին պատասխանները ընդհանրապես կոտրեցին այն տարածված կարծիքը, որ իբր Հայաստանում չկան եվրաինտեգրացիոն տրամադրություններ: Ավելին, ակնհայտ է, որ երկրի քաղաքացիները կապում են Հայաստանի ապագան եվրոպական ինտեգրման հետ եւ հույս ունեն ԵՄ-ի հետ սերտ համագործակցության՝ զարգացման ժողովրդավար մոդելի կառուցման համար: 2018 թվականի ապրիլի Հայկական Թավշյա հեղափոխությունը արդյունքն էր, ի թիվս այլ բաների, որ քաղաքացիների այս հույսերը չցանկացան իրականացնել երկրի նախկին իշխանությունները, եւ քաղաքացիները մերժեցին նրանց:

Այսպիսով, 2017 թվականի Նախագծի իրականացման առաջին փուլում հարցում էր անցկացվել Հայաստանի քաղաքացիների շրջանում: Նույն հարցումը կատարվել էր նաև Հայաստանի Ազգային Ժողովում խմբակցություններ ունեցող քաղաքական կուսակցությունների, ինչպես նաև արտախորհրդարանական մի շարք կուսակցությունների շրջանում: Հարցման նպատակն էր պարզել, թե որքանով է քաղաքացիների կարծիքը համընկնում կամ տարբերվում քաղաքական կուսակցությունների կարծիքից:

Այդ նպատակով 2017 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում ԳՏՀՎԿ-ն դիմեց Հայաստանի ԱԺ խմբակցություններին եւ մի շարք արտախորհրդարանական կուսակցություններին, որոնք մասնակցել էին 2017 թվականի խորհրդարանական ընտրություններին, հարցաթերթիկը լրացնելու առաջարկով (մանրամասն, տես “Analysis of Policies of Political Parties and Public Sector in Armenia Regarding the EU, NATO, CSTO as well as EEU and Results of the Public Opinion Poll”, Yerevan 2018):

Այստեղ նույնպես մենք ստացանք արդյունքներ, որոնք լուրջ քննարկումներ էին առաջացրել Հայաստանում: Այսպես, կուսակցությունների մոտ 32%-ը պատասխանել էր, որ ՀԱՊԿ-ը ապահովում է Հայաստանի անվտանգությունը, մինչդեռ, ինչպես վերը նշված էր, քաղաքացիների միայն 15,78% էր համաձայն այդ պնդման հետ: Ինչպես տեսնում ենք, հասարակության եւ քաղաքական վերնախավի տրամադրվածությունը ներկայացված հարցերի շուրջ տարբերվում է կրկնակի անգամ: Մեկ այլ օրինակ՝ հարցին, թե կապո՞ւմ էք Հայաստանի ապագան ԵՄ անդամակցության հետ, հարցված կուսակցությունների 41% էր պատասխանել դրական, մինչդեռ, ինչ վերը ներկայացված էր, հարցված քաղաքացիների 58.89% համարում էր, որ Հայաստանը իր ապագան պետք է կապի ԵՄ ինտեգրման հետ: Հայաստանի քաղաքական վերնախավի եւ հասարակության դիրքերի նման լուրջ տարբերությունները ակնհայտորեն խոսում էին երկրում լուրջ փոփոխությունների անհրաժեշտության մասին: Այդ տարբերությունները խոսում էին նաև նրա մասին, որ քաղաքական վերնախավը, այդ թվում՝ ներկայացված Հայաստանի ԱԺ-ում, չէր արտահայտում Հայաստանի հասարակությունում տիրող տրամադրվածությունները: Եվ պատահական չէր, որ այս հետազոտություններից ելնելով, մենք կանխատեսել էինք այն հեղափոխական փոփոխությունները, որոնք ծագեցին երկրում՝ 2018 թվականի ապրիլից սկսած:


2017 թվականի մեր հետազոտության արդյունքները խթանեցին անհրաժեշտությունը շարունակել նմանատիպ հարցումները՝ հայ հասարակության մեջ տիրող տրամադրությունների մասին ավելի օբյեկտիվ տեղեկություններ ստանալու համար, ինչպես նաև կատարելու Հայաստանի քաղաքական դաշտում տեղի ունեցող գործընթացների ուսումնասիրությունները: 2018 թվականի ամռանը մենք շարունակեցինք մեր հարցումները նույն թեմաների եւ հարցերի շուրջ, որպեսզի պարզաբանենք հայ հասարակության տրամադրությունները 2018 թվականի ապրիլյան Թավշյա հեղափոխությունից անմիջապես հետո:

Հարցումը կատարվել է ընդհանուր թվով 796 քաղաքացիների շրջանում՝ Երեւանում, Գյումրիում, Վանաձորում, Վայքում եւ Եղեգնաձորում, 2018 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսների ընթացքում: Հարցման նպատակն էր ուսումնասիրել Հայաստանի քաղաքացիների տրամադրությունները միջազգային կազմակերպությունների նկատմամբ, ինչպիսիք են ԵՄ-ն, ԵԱՏՄ-ն, ՀԱՊԿ-ը եւ ՆԱՏՕ-ն: Նաև մենք հարցաթերթիկում ներառեցինք մի քանի նոր հարցեր, որոնք համարեցինք կարևոր դարձան 2018 թվականի ապրիլի Թավշյա հեղափոխությունից հետո: Հարցումը իրականացվել է ԳՏՀՎԿ-ի կողմից՝ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի (NED) աջակցությամբ:

Հարցման ընթացքում քաղաքացիները պատասխանել են 19 հարցի: Ներկայացնում ենք հարցման արդյունքները եւ նրանց մեկնաբանությունները, ինչպես նաև համեմատությունը 2017 թվականին ստացված արդյունքների հետ:

Հարց 1. Համարո՞ւմ եք Ռուսաստանին Հայաստանի դաշնակից:

Նկար 1



Եթե համեմատենք 1-ին հարցի պատասխանների արդյունքները 2017 թվականին ստացված արդյունքների հետ, ապա պարզ է դառնում, որ Ռուսաստանի նկատմամբ Հայաստանի հասարակության դիրքորոշումը ավելի դրական է դարձել: Այսպես, եթե 2017թ. օգոստոսին հարցվածների 34.33% էր համարում Ռուսաստանին դաշնակից (այս հետազոտությունները 2017 թվականին մեծ արձագանք առաջացրեցին ինչպես հայ


հասարակության, այնպես էլ միջազգային հանրության շրջանում, քանի որ կար կարծրատիպ, որ անկախ ամեն ինչից Հայաստանի քաղաքացիների մեծամասնությունը Ռուսաստանին դաշնակից է համարում, իսկ հետազոտությունից ստացված տվյալներով հարցվածների միայն մեկ երրորդն էր այդպես համարում), ապա 2018 թ., ինչպես երևում է նկար 1-ից, արդեն՝ 41.21%-ը: Ակնհայտ է, որ անգամ այս թիվը Ռուսաստանի համար, որը համարվում է Հայաստանի դաշնակից, բարձր չէ:

Կրճատվել է մարդկանց թիվը, որոնք Ռուսաստանին չեն համարում Հայաստանի դաշնակից: Այսպես, եթե 2017 թ. Հայաստանի քաղաքացիների մոտ 30.56% չէր համարում Ռուսաստանին դաշնակից, ապա արդեն 2018 թ. այդ թիվը կրճատվել է մինչև 19.10%: Նույն մակարդակին է մնացել քաղաքացիների թիվը, որոնք Ռուսաստանին համարում են մասամբ դաշնակից: Այսպես, 2017թ. քաղաքացիների 35.11% էր այդպես համարում, իսկ 2018 թ.՝ ինչպես երևում է նկար 1-ից, մոտ 39.70%-ը: Հայ հասարակության տրամադրությունների այս փոփոխությունները անցյալ տարվա համեմատ կարելի է բացատրել մի շարք գործոններով: Առաջին՝ Հայաստանում Թավշյա հեղափոխության ընթացքում Ռուսաստանը ցուցաբերեց զսպվածություն, չնայած այն բանին, որ մարդիկ վախենում էին, որ ռուսական ղեկավարությունը կփորձի աջակցել նախկին վարկաբեկված հայկական իշխանությանը՝ ի դեմս Սերժ Սարգսյանի: Հեղափոխության ընթացքին այդ չմիջամտելը բերեց Ռուսաստանի նկատմամբ դրական արձագանքի հայ հասարակության շրջանում: Երկրորդ՝ Թավշյա հեղափոխությունը Հայաստանում չունեւր աշխարհաքաղաքական ուղղվածություն (այսինքն, միտված չէր եվրաինտեգրմանը), այլ միտված էր բացառապես ներքին խնդիրների լուծմանը: Հեղափոխության առաջնորդ Նիկոլ Փաշինյանը հավաքներում իր ելույթների ժամանակ չէր օգտագործում հակառուսական հռետորաբանություն, ավելին՝ դրական մեսիջներ էր

ուղղում դեպի Ռուսաստան: Դա, անշուշտ, դրական ազդեցություն ունեցավ հայ հասարակության շրջանում Ռուսաստանի նկատմամբ:

Հարց 2. Համարո՞ւմ եք Ռուսաստանը ապահովում է Հայաստանի անվտանգությունը:

Նկար 2



Ինչպես տեսնում ենք, երկրորդ հարցի պատասխաններում եւս նկատվում է դրական միտում Ռուսաստանի հանդեպ հայ հասարակության

տրամադրություններում: Այսպես, եթե 2017թ. հարցվածների միայն 25.67% էր համարում, որ Ռուսաստանը ապահովում է Հայաստանի անվտանգությունը,


ապա արդեն 2018 թ. այդ թիվը աճել է եւ հասել է 30.28%, ինչպես երեւում է նկար 2-ից: Ավելին, եթե 2017թ. հարցվածների 30.56% չէր համարում, որ Ռուսաստանը ապահովում է Հայաստանի անվտանգությունը, ապա 2018թ. այդ թիվը նվազել է մինչեւ 24.37%: 2017թ. հարցված քաղաքացիների 43.67%-ը համարում էր, որ Ռուսաստանը մասամբ է ապահովում Հայաստանի անվտանգությունը, եւ 2018թ. այդպես կարծող քաղաքացիների թիվը շատ քիչ է փոխվել եւ դարձել է 45.25%:

Հայ հասարակության տրամադրությունների այս փոփոխությունները անցյալ տարվա համեմատ կարելի է բացատրել նույն գործոններով, ինչպես մեր հետազոտության առաջին հարցի պատասխանները ուսումնասիրելիս: Առաջին՝ Հայաստանում տեղի ունեցած Թավշյա հեղափոխության ժամանակահատվածում՝ Ռուսաստանը ցուցաբերեց զսպվածություն, չնայած այն բանին, որ մարդիկ վախենում էին, որ ռուսական ղեկավարությունը կփորձի աջակցել նախկին վարկաբեկված հայկական իշխանությանը՝ ի դեմս Սերժ Սարգսյանի: Հեղափոխության ընթացքին այդ չմիջամտումը բերեց Ռուսաստանի նկատմամբ դրական արձագանքի հայ հասարակության շրջանում: Երկրորդ՝ Թավշյա հեղափոխությունը Հայաստանում չունեւր աշխարհաքաղաքական ուղղվածություն (այսինքն, միտված չէր եվրախնտեգրմանը), այլ միտված էր բացառապես ներքին խնդիրների լուծմանը: Հեղափոխության առաջնորդ Նիկոլ Փաշինյանը հավաքների եւ ելույթների ժամանակ չէր օգտագործում հակառուսական հռետորաբանություն, ավելին՝ դրական մեսիջներ էր ուղղում դեպի Ռուսաստան: Դա, անշուշտ, դրական ազդեցություն ունեցավ հայ հասարակության շրջանում՝ Ռուսաստանի նկատմամբ նման տեսակետ ձեւավորելու վրա:

Հարց 3. Համարո՞ւմ եք Ռուսաստանի հետ սերտ հարաբերությունները խոչընդոտ Հայաստանի՝ ԵՄ-ի հետ հարաբերություններում:

Նկար 3

Երրորդ հարցի պատասխաններից նույնպես նկատելի է, որ Ռուսաստանը արդեն իսկ




քիչ է ընկալվում որպես խոչընդոտ Հայաստանի՝ Եվրամիության հետ համագործակցությունում:

Այսպես, եթե 2017թ. հարցված քաղաքացիների 40.22% էր կարծում, որ Ռուսաստանը խոչընդոտ է Հայաստան-ԵՄ համագործակցությանը, ապա 2018թ. այդպես է մտածում միայն 30.03%-ը: Բացի այդ, եթե 2017 թ.

հարցվածների 29.67%-ը չէր համարում Ռուսաստանը խոչընդոտ Հայաստան-ԵՄ համագործակցությանը, ապա 2018թ. այդպես համարողների թիվը աճել է մինչև 38.07%, ինչը նույնպես վկայում է դրական տրամադրությունների մասին Ռուսաստանի հանդեպ: Ռուսաստանը Հայաստան-ԵՄ հարաբերություններին մասամբ խոչընդոտ համարող քաղաքացիների թիվը շատ չի փոխվել: Այսպես, 2017թ. այդպես համարում էր հարցվածների 29.67%-ը, իսկ 2018 թ.՝ 31.91%-ը, ինչպես երևում է նկար 3-ում:

Հարց 4. Ինչպե՞ս է ազդում Ռուսաստանը Լեռնային Ղարաբաղի հակամարտության բանակցային գործընթացին:

Նկար 4




Ինչպես տեսնում ենք, չորրորդ հարցի պատասխաններում եւս նկատվում է դրական միտում Ռուսաստանի հանդեպ հայ հասարակության տրամադրություններում, այդ թվում՝ նաև դարաբաղյան հարցում: Այսպես, եթե 2017թ. հարցվածների միայն 40.11% էր դրական գնահատում Ռուսաստանի դերը դարաբաղյան հարցի վերաբերյալ բանակցություններում, ապա 2018թ.,

ինչպես տեսնում ենք նկար 4-ում, արդեն հարցվածների 48.53%-ը դրական է գնահատում

Ռուսաստանի դերը բանակցություններում: Անցյալ տարվա ընթացքում հայ հասարակության տրամադրությունների այս փոփոխությունները կարելի է բացատրել նույն գործոններով, ինչպես առաջին երեք հարցերի պատասխանները ուսումնասիրելիս: Այլ հարց է, թե որքանով այդ միտումը շարունակական կլինի ապագայում, հաշվի առնելով բազմաթիվ գործոններ, ինչպես տարածաշրջանային, այնպես էլ հայ-ռուսական հարաբերությունների զարգացումներում:

Հարց 5. Կարծում եք Հավաքական Անվտանգության Պայմանագրի Կազմակերպությունը (ՀԱՊԿ) ապահովո՞ւմ է Հայաստանի անվտանգությունը:

Նկար 5




Անցյալ տարվա համեմատ Ռուսաստանի ընկալման հանդեպ դրական դիմամիկան հայ հասարակության շրջանում մասամբ տարածվեց նաև ՀԱՊԿ-ի վրա, կազմակերպության, որտեղ գերակշռում է Ռուսաստանի դերը: Եթե 2017թ. քաղաքացիների միայն 15.78% էր համարում, որ ՀԱՊԿ-ը

ապահովում է իրենց անվտանգությունը, ապա 2018թ. այդ թիվը հասավ 20.99%: Եվ, համապատասխանաբար, եթե 2017թ. հարցված քաղաքացիների 41.33% չէր համարում, որ ՀԱՊԿ-ը ապահովում է Հայաստանի անվտանգությունը, ապա 2018թ. այդ թիվը նվազեց մինչև 32.36% (տես նկար 5): 2017 թ. հարցվածների 42.44% համարում էր, որ ՀԱՊԿ-ը միայն մասամբ է ապահովում Հայաստանի անվտանգությունը, իսկ 2018թ՝ 46.65%:

Հարց 6. Կարծում եք ՀԱՊԿ-ը կաջակցի՞ մեզ՝ Հայաստանի եւ Ադրբեջանի միջև պատերազմի դեպքում:

Նկար 6




Այս հարցը բացառապես զգայուն է հայ հասարակությունում՝ կապված Հայաստանի համար ՀԱՊԿ-ի շրջանակներում ծագած խնդիրների հետ, այդ թվում՝ կապված Հայաստանի անվտանգության ապահովման հետ: 2016 թվականի ապրիլյան քառօրյա պատերազմի ընթացքում ՀԱՊԿ-ը ոչ միայն չօժանդակեց Հայաստանին, այլև

հանդես եկավ ուշացած ոչինչ չստող հայտարարությամբ: Այդ իսկ պատճառով Հայաստանում ՀԱՊԿ-ի նկատմամբ բավական քննադատական է վերաբերմունքը: Եվ զարմանալի չէ, որ 2017թ., պատասխանելով հարցին, թե ՀԱՊԿ-ը կաջակցի Հայաստանին Ադրբեջանի ագրեսիայի դեպքում, հարցվածների միայն 31.22% էր վստահություն հայտնել: Արդեն 2018թ. վստահությունը ՀԱՊԿ-ի նկատմամբ աճել է եւ նկար 6-ից տեսնում ենք, որ հասել է 40.56%, ինչը մենք վերը պարզաբանեցինք՝ հայկական թավշյա հեղափոխությունից անմիջապես հետո հայ հասարակությունում Ռուսաստանի նկատմամբ վստահության աճով: Բացի դրանից, նվազել է այն մարդկանց թիվը, ովքեր չեն հավատում, որ ՀԱՊԿ-ը կաջակցի Հայաստանին Ադրբեջանի կողմից ագրեսիայի դեպքում՝ 63,44% -ից հասնելով 59,44% -ի:

Հարց 7. Կարծում ե՞ք Հայաստանի նոր իշխանությունները պե՞տք է վերսկսեն բանակցությունները Ադրբեջանի հետ:

Նկար 7




Այս հարցը ներառված չէր 2017թ. հարցաթերթիկում, սակայն ներառվել է 2018 թ հարցաթերթիկում: Հայաստանում լուրջ փոփոխություններ են տեղի ունեցել, որոնք կարող են Հարավային Կովկասում տարածաշրջանային հակամարտությունների եւ համագործակցության հարցերում դրական դինամիկայի հնարավորություններ ստեղծել:

Թվում է դրական, որ նույնիսկ 2016թ. ապրիլյան քառօրյա հայ-ադրբեջանական պատերազմից հետո, քաղաքացիների 80.03% -ը դրականորեն արձագանքեց Ադրբեջանի հետ բանակցությունները վերսկսելու անհրաժեշտությանը եւ միայն 19.97%՝ բացասական: Սա նաեւ ասում է, որ հայ հասարակությունում դրական սպասումներ կան նոր Կառավարության աշխատանքից:

Հարց 8. Կցանկանա՞ք Ադրբեջանից ներկայացուցիչների հետ բիզնես կամ այլ ոլորտում համագործակցություն հաստատել:

Նկար 8




Այս հարցը նույնպես ներառված չէր 2017թ. հարցաթերթիկում, սակայն ներառվել է 2018 թ. հարցաթերթիկում:

Հայաստանում լուրջ փոփոխություններ են տեղի ունեցել, որոնք, հնարավոր է, կարող են Հարավային Կովկասի համագործակցության հարցերում դրական դինամիկայի

հնարավորություններ ստեղծել: Թվում է դրական, որ նույնիսկ 2016թ. ապրիլյան քառօրյա հայ-ադրբեջանական պատերազմից հետո, քաղաքացիների մոտ 31.86% ցանկանում է համագործակցություն սկսել, այդ թվում՝ գործարար ոլորտում, ադրբեջանցիների հետ: Սա նաև ասում է, որ հայ հասարակությունում դրական սպասումներ կան նոր Կառավարության աշխատանքից:

Հարց 9. Ինչպիսի՞ ազդեցություն ունի Հայաստանի վրա Եվրասիական Տնտեսական Միությունում Հայաստանի անդամակցությունը:

Նկար 9




Իններորդ հարցի պատասխաններից տեսնում ենք, որ Հայաստանում աճել է նաև ԵԱՏՄ-ի նկատմամբ դրական ընկալումը: Այսպես, եթե 2017թ. քաղաքացիների միայն 45.33% էր դրական գնահատում Հայաստանի անդամակցությունը այդ կազմակերպությունում, ապա 2018թ. այդ տոկոսը աճել է մինչև 66.92% : Այստեղ մենք ունենք նույն ազդեցությունը, որը ՀԱՊԿ-ի հետ էր: Ռուսաստանի հանդեպ

վստահության բարձրացումը ավտոմատ կերպով առաջացնում է Հայաստանում այն կազմակերպությունների հանդեպ վստահության աճը, որտեղ Ռուսաստանը գերիշխող դեր ունի: Բացի դրանից, նկատենք, որ Թավշյա հեղափոխության առաջնորդ Նիկոլ Փաշինյանը բազմիցս ընդգծել է ՀԱՊԿ-ում եւ ԵԱՏՄ-ում անդամակցության եւ համագործակցության շարունակման երկրի պատրաստակամությունը:

Հարց 10. Կարծում եք նոր իշխանությունները պե՞տք է ավելի խորացնեն Եվրոպական

Միության (ԵՄ) հետ հարաբերությունները:


Նկար 10



2017թ. ԵՄ-ի հետ հարաբերությունները խորացնելու հարցված քաղաքացիների կողմակիցների թիվը կազմում էր 88.67%, որը 2018 թվականին գրեթե չի փոխվել: Իրոք, նկար 9-ից երևում է, որ Թավշյա հեղափոխությունից հետո, Հայաստանի հետ ԵՄ հարաբերությունների խորացման կողմնակիցների թիվը կազմել է 86,85%:

Հարց 11. ԵՄ-ն օգնո՞ւմ է Հայաստանում քաղաքական եւ տնտեսական բարեփոխումներին:

Նկար 11




2017թ. հարցված քաղաքացիների 35.22% դրական էր գնահատում ԵՄ-ի դերը՝ Հայաստանում ընթացող տնտեսական եւ քաղաքական բարեփոխումներում: Ինչպես երևում է նկար 11-ից, 2018թ. նկատելի է Հայաստանում ԵՄ-ի դերը դրական գնահատող մարդկանց թվաքանակի աճ, եւ այդ թիվը հասնում է արդեն 40.38% -ի: 2017թ. ԵՄ-ի դերը բացասական էր գնահատում

հարցվածների 14.11%, իսկ 2018թ. արդեն ընդամենը՝ 12.58%-ը: Ինչպես տեսնում ենք 9-11 նկարներից, Հայաստանում դրական տրամադրությունների աճ է նկատվում նաեւ ԵՄ-ն նկատմամբ: Չնայած նրան, որ հայկական Թավշյա հեղափոխությունը գունավոր չէր, այսինքն՝ չունեւ աշխարհաքաղաքական ուղղվածություն, նկատելի է Հայաստանում դրական տրամադրվածության աճը ԵՄ-ի նկատմամբ: Այստեղ պատճառները բազմաթիվ են: Դա պայմանավորված է նաեւ այն հանգամանքով, որ անկախության տարիներին ԵՄ-ն Հայաստանում բավական ակտիվ է եղել՝ տարբեր ոլորտներում լուրջ աջակցություն ցուցաբերելով: Բացի այդ, ԵՄ-ն եւ եվրոպական երկրները լուրջ աջակցություն են ցուցաբերում Հայաստանի քաղաքացիական հասարակությանը: Գաղտնիք չէ, որ ոչկառավարական կազմակերպությունները, վերլուծական կենտրոնները, փորձագիտական հանրությունը, ՋԼՄ-ները շատ ակտիվ են երկրի կյանքում, եւ նրանցից գրեթե բոլորը աջակցություն են ստանում եվրոպական կամ արեւմտյան ինստիտուտների կողմից: Վրաստանի դրական փորձը Եվրամիության եւ ՆԱՏՕ-ի հետ համագործակցությունում նույնպես դրականորեն է ազդում Հայաստանում հասարակական կարծիքի վրա: Վրաստանի առաջընթացը գրեթե բոլոր ոլորտներում (առավել ակնհայտ դա երևում է զբոսաշրջության ոլորտում), ինչպես նաեւ կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարը հայ հասարակությունը կապում է Վրաստանի եվրոպական եւ եվրոատլանտյան ձգտումների հետ:

Հարց 12. Կապո՞ւմ եք Հայաստանի ապագան ԵՄ անդամակցության հետ:

Նկար 12




Նկար 12-ից երևում է, որ հարցված քաղաքացիների 66.71%-ը Հայաստանի ապագան կապում է ԵՄ-ի հետ: 2017թ. այդ թիվը կազմում էր 58.89%: Հայաստանի Եվրախնտեզրման հակառակորդների թիվը նույնպես նվազել է: Եթե 2017թ. Հայաստանի ԵՄ-ի հետ ինտեզրման հակառակորդների թիվը կազմում էր 38.22%, ապա 2018թ. նրանց թիվը՝ ընդամենը 33.29% է:

Ինչպես տեսնում ենք, 2018թ. հետազոտությունները ցույց են տալիս, որ

միաժամանակ աճում է հայ հասարակության հետաքրքրությունն ու վստահությունը՝ ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Եվրամիության հանդեպ: Դա կարելի է բացատրել նրանով, որ Հայաստանում գերակշռում է այն գաղափարը, որ Հայաստանը պետք է վարի բազմավեկտոր արտաքին քաղաքականություն, այսինքն՝ միաժամանակ ակտիվորեն աշխատի Ռուսաստանի, ԵՄ-ի, ԱՄՆ-ի, Չինաստանի եւ աշխարհի այլ առաջատար խաղացողների հետ: Քաղաքական կուսակցությունները, այդ թվում՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորած «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցությունը, նույնպես առաջարկում են երկրի զարգացման այդ ուղին:

Հարց 13. Ինչպե՞ս եք վերաբերվում ապագայում Հայաստանի անդամակցությանը ՆԱՏՕ-ին:

Նկար 13




Դեռ 2017թ. հարցման ժամանակ հարցված քաղաքացիների մոտ 61.67% դրական էր վերաբերվում Հայաստանի ՆԱՏՕ-ին անդամակցությանը ապագայում: Հասկանալի է, որ Հայաստանի բարդ աշխարհաքաղաքական իրավիճակի պատճառով այս թեման երկրի արտաքին քաղաքականության հիմնական օրակարգը չէ, սակայն երկարաժամկետ հեռանկարում ՆԱՏՕ-ին անդամակցությունը

դրական է գնահատվում Հայաստանում: Ավելին, ինչպես տեսնում ենք նկար 13-ից, 2018թ. եվրոատլանտյան ինտեգրման կողմնակիցների թիվը աճել է եւ հասել է 69.89%-ի: Համապատասխանաբար եւ բացասաբար վերաբերվող մարդկանց թիվը նվազել է `2017թ. 35.89%-ից մինչեւ 2018թ.` 30.11%: Պետք է նշել, որ դեռ 2017թ. Հայաստանում եվրոպական եւ եվրոատլանտյան ինտեգրման կողմնակիցների նման բարձր տոկոսը լուրջ քննարկումներ առաջացրեց հայ հասարակությունում: Այնուամենայնիվ, այս նոր ուսումնասիրությունը հաստատում է, որ հայ հասարակության մեջ ԵՄ-ի եւ ՆԱՏՕ-ի հանդեպ դրական վերաբերմունքը ակնհայտ է եւ երկարատեւ:

Ինչպես տեսնում ենք, 2018թ. հետազոտությունները ցույց են տալիս, որ միաժամանակ աճում է հայ հասարակության հետաքրքրությունը եւ վստահությունը՝ ինչպես Ռուսաստանի, այնպես էլ ԵՄ-ի եւ ՆԱՏՕ-ի նկատմամբ: Դա կարելի է բացատրել նրանով, որ Հայաստանում գերակշռում է այն գաղափարը, որ Հայաստանը պետք է վարի բազմավեկտոր արտաքին քաղաքականություն, այսինքն՝ միաժամանակ ակտիվորեն աշխատի Ռուսաստանի, ԵՄ-ի, ԱՄՆ-ի, Չինաստանի եւ աշխարհի այլ առաջատար խաղացողների հետ: Քաղաքական կուսակցությունները, այդ թվում՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորած «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցությունը, նույնպես առաջարկում են երկրի զարգացման այդ ուղին:

Հարց 14. Կարծում եք սերտ համագործակցությունը ԵՄ-ի եւ ՆԱՏՕ-ի հետ կարո՞ղ է նպաստել Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը:

Նկար 14




Ինչպես տեսնում ենք, ինչպես 2017թ., 2018թ. եւս բավականին բարձր է քաղաքացիների թիվը, որոնք դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորումը կապում են (կամ մասամբ են կապում) ԵՄ-ի եւ ՆԱՏՕ-ի սերտ համագործակցության հետ: Այսպես, 2017թ. հարցված քաղաքացիների 35.44% էր այդպես

համարում, իսկ 37.00%-ը մասամբ էր հավատում ԵՄ-ի եւ ՆԱՏՕ-ի օգնությանը դարաբաղյան կարգավորման գործընթացում: 2018թ., ինչպես տեսնում ենք նկար 14-ից, արդեն 32,78% է այդպես համարում, իսկ 47.04% մասամբ է կապում դարաբաղյան հակամարտության կարգավորումը ԵՄ-ի եւ ՆԱՏՕ-ի հետ համագործակցությամբ:

Հարց 15. Ինչպե՞ս եք վերաբերվում Վրաստանի հնարավոր անդամակցությանը ՆԱՏՕ-ին:

Նկար 15




Սա նոր հարց է, որը մենք ներառել ենք 2018թ. հարցաթերթիկում: Դա կապված է նրա հետ, որ Թավշյա հեղափոխությունից հետո, անհրաժեշտ էր հասկանալ, թե ինչքանով է հայ հասարակությունը Վրաստանի անդամակցությունը ՆԱՏՕ-ին կարելորում Հայաստանի եւ նրա անվտանգության համար: Բացի այդ, ինչքանով կարող է Հայաստանի անդամակցությունը ՆԱՏՕ-ին դառնալ Հայաստանի

արտաքին քաղաքականության համար օրակարգային հարց: Ինչպես տեսնում ենք նկար 15-ից, Հայաստանի քաղաքացիների 71,19%-ը դրական է վերաբերվում Վրաստանի անդամակցությանը ՆԱՏՕ-ին՝ Հայաստանի համար այս հարցում որեւէ խնդիր չտեսնելով:

Հարց 16. Կարծում ե՞ք Հայաստանում 2018թ. ապրիլյան հեղափոխությունից հետո, Հանրային առաջին հեռուստատեսային փոխել է իր լուսաբանման ոճը:

Նկար 16




Այս հարցը ներառվեց մեր հարցաթերթիկներում 2018թ., որովհետև Հայաստանում լուրջ փոփոխություններ տեղի ունեցան, եւ հետաքրքիր էր իմանալ քաղաքացիների ընկալումը այն քայլերի մասին, որոնք ձեռնարկում են Հայաստանի կառավարությունը եւ Հանրային հեռուստաընկերությունը նոր պայմաններում: Փաստն այն է, որ Հայաստանի Հանրային

հեռուստատեսությունը ավանդաբար սպասարկում էր իշխող կուսակցության շահերը եւ չէր արտացոլում բնակչության լայն շերտերի, այդ թվում՝ քաղաքական ընդդիմության դիրքորոշումը: Իհարկե, վաղ է վերջնական եզրակացություններ անել, Հայաստանում տեղի ունեցած Թավշյա հեղափոխությունից հետո քիչ ժամանակ է անցել, բայց հարցվածների 45,59%-ը կարծում է, որ Հայաստանի Հանրային հեռուստատեսությունը սկսել է իր տեղեկատվական քաղաքականությունը փոխել դրական ուղղությամբ, ինչը զգալի թիվ է:

Հարց 17. Վստահո՞ւմ ե՞ք նոր իշխանությունների կողմից կատարվող կոռուպցիայի դեմ պայքարին:

Նկար 17




Այս հարցը ներառվեց մեր հարցաթերթիկներում 2018թ., որովհետև Հայաստանում լուրջ փոփոխություններ տեղի ունեցան, եւ կարելու էր իմանալ քաղաքացիների ընկալումը այն քայլերի մասին, որոնք ձեռնարկում է նոր կառավարությունը Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ: Ինչպես տեսնում ենք, վստահության մակարդակը նոր Կառավարության հանդեպ բավականին բարձր է: Հարցված քաղաքացիների մոտ

84.51% վստահում է նոր Կառավարության ձեռնարկած քայլերին կոռուպցիայի դեմ պայքարում, եւ ընդամենը 15.24%՝ չի վստահում:

Հարց 18. Կարծում եք նոր իշխանությունները բավարա՞ր քայլեր են կատարում երկրում սոցիալ-տնտեսական եւ քաղաքական բարեփոխումների ուղղությամբ:

Նկար 18




Այս հարցը ներառվեց մեր հարցաթերթիկներում 2018թ., որովհետեւ Հայաստանում լուրջ փոփոխություններ տեղի ունեցան, եւ կարելու էր իմանալ քաղաքացիների ընկալումը այն քայլերի մասին, որոնք ձեռնարկում է նոր կառավարությունը Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ: Ինչպես տեսնում ենք, վստահության մակարդակը նոր Կառավարության հանդեպ բավականին բարձր է: Հարցված քաղաքացիների 46.10%

աջակցում է նոր Կառավարության ձեռնարկած քայլերին, իսկ 40.18% մասամբ է աջակցում, ինչը եւ իր արտացոլումը գտավ 2018թ. դեկտեմբերին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրություններին, երբ Նիկոլ Փաշինյանի գլխավորած «Իմ Քայլը» դաշինքը ստացավ ընտրողների ձայների ավելի քան 70%-ը:

Հարց 19. Վստահո՞ւմ եք Ռուսական ալիքների կողմից տրամադրած տեղեկությանը:

Նկար 19



Այս հարցը նույնպես ներառվեց մեր հարցաթերթիկներում 2018թ: Իրոք, Հայաստանում ռուսական հեռուստաալիքների ազդեցությունը ավանդաբար բարձր էր, ուստի հետաքրքիր էր տեսնել, թե ինչպես են Հայաստանում հեղափոխական իրադարձությունները ազդել Հայաստանի քաղաքացիների վստահության վրա՝

ռուսաստանյան ՁԼՄ-ների կողմից տարածած տեղեկատվության նկատմամբ: Ինչպես տեսնում ենք, Հայաստանում ռուսական ՁԼՄ-ների հանդեպ վստահության մակարդակը բարձր չէ: Հարցվածների 35.73%-ը վստահում է ռուսական ալիքների կողմից տրամադրած տեղեկատվությանը, իսկ 64.14%՝ ոչ:

Ինչպես նկատեցինք, այստեղ ներկայացված ուսումնասիրության մեջ Ծրագրի փորձագետները ներկայացրեցին մի քանի նոր հարցեր: Այդ հարցերը 2018 թ. ապրիլյան հայկական Թավշյա հեղափոխությունից հետո դարձել են չափազանց կարևոր Հայաստանի համար:

Ամփոփելով՝ նշենք, որ 2018 թվականի դեկտեմբերի 9-ին Հայաստանում կայացած արտահերթ խորհրդարանական ընտրություններից, նոր խորհրդարանի ձևավորումից եւ քաղաքական կուսակցությունների ավելի հստակ դիրքավորումից հետո (խոսքը վերաբերում է ինչպես ԱԺ-ում ներկայացված երեք խմբակցություններին, այնպես էլ արտախորհրդարանական ընդդիմությանը եւ նորաստեղծ քաղաքական կուսակցություններին), կարևոր է դառնում հիմնական քաղաքական դերակատարների դիրքորոշումների ուսումնասիրման խնդիրը նոր իրողություններում: Հետաքրքիր է, թե ինչքանով նրանք կարտացոլեն այն տրամադրությունները, որոնք գրանցված են այստեղ ներկայացված հետազոտությունում: Հետազոտությունը իրականացվել է ԳՏՎԿ-ի կողմից 2018 թվականին:

Այս հետազոտությունը արտացոլում է այն հայացքները, որոնք տիրում էին հայ հասարակության շրջանում Թավշյա հեղափոխությունից անմիջապես հետո, սակայն կարևոր է նաև ուսումնասիրել Հայաստանի քաղաքական դաշտի հիմնական դերակատարների վերաբերմունքը եւ համեմատություն անցկացնել այս երկու ուսումնասիրությունների միջև: